«Հավելված N 2
Հաստատված է ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2019 թվականի դեկտեմբերի 25-ի
N519-Ն որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿՊ0139
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
(*Հրապարակային պայմանագիր*)

ք.Երևան
(կնքման վայրը)

«05» 03 2024թ.

Բաշխողը (Երաշխավորված մատակարարը)՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը)

ի դեմս Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, մի կողմից
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած օրինակելի ձևին համապատասխան ակցեպտը (այսուհետ՝ ակցեպտ) ներկայացրած Սպառողը, այսուհետ համատեղ կոչվելով կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, Հանձնաժողովի հաստատած՝ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ), էլեկտրաէներգետիկական բաշխման ցանցային կանոններով (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) և այլ իրավական ակտերով, կնքում են սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որը հրապարակային է և գործում է ստորև շարադրված պայմաններով և Սպառողի կողմից ներկայացված՝ ակցեպտում ներառված տվյալներով:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի համաձայն՝ Բաշխողը Սպառողին մատուցում է Մատակարարից գնված էլեկտրական էներգիայի բաշխման ծառայություն կամ իրականացնում է էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարում, իսկ Սպառողը վճարում է իրեն մատուցված բաշխման ծառայության, ինչպես նաև երաշխավորված մատակարարման դիմաց:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Պայմանագրի համաձայն կողմերն ունեն այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով:

3. Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է ԷՄԱ կանոններով սահմանված կարգով:

4. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքը, բացառությամբ Պայմանագրի 5-րդ կետով նախատեսված դեպքերի որոշվում է տվյալ լարման մակարդակի և ժամային տիրույթների համար (եթե Առևտրային հաշվառքի սարքն ունի նման տարանջատված հաշվառման հնարավորություն) Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության արժեքը որոշվում է տվյալ լարման մակարդակի համար Հանձնաժողովի կողմից սահմանված բաշխման ծառայության մատուցման սակագնի և բաշխված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով:

5. Երաշխավորված մատակարարի կողմից ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում Սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև Սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով սահմանված ժամկետում և կարգով Որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ Մատակարար չընտրելու դեպքում՝ Հաշվարկային ամսվա ընթացքում Երաշխավորված մատակարարի կողմից Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքը հաշվարկվում է այդ սպառողական խմբի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի և մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով:

6. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

7. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում մատակարարված էլեկտրական էներգիայի, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ բաշխման ծառայության արժեքը Բաշխողի՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված բանկային հաշվին վճարում է համաձայն ԷՄԱ կանոնների՝ Բաշխողի կողմից (անձամբ կամ լիազորված անձի միջոցով) ԷՄԱ կանոններով սահմանած կարգով և ժամկետում հաշվարկային փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

8. ԷՄԱ կանոնների համաձայն տույժ հաշվարկելու դեպքում Բաշխողը Սպառողի վճարումներից առաջնահերթ մարում է մատակարարված էլեկտրական էներգիայի, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում մատուցված բաշխման ծառայության արժեքը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի գծով պարտավորությունները:

9. Պարտքի առկայության դեպքում Բաշխողը չպետք է դադարեցնի Սպառողի էլեկտրամատակարարումը, եթե Սպառողը ներկայացրել է Բաշխողի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց: Սույն կետը չի սահմանափակում Բաշխողի իրավունքը պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում դադարեցնելու Սպառողի էլեկտրամատակարարումը՝ ապահովելով ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված՝ տվյալ Սպառողի էլեկտրամատակարարման դադարեցման ընթացակարգերը:

10. Բաշխողի (Երաշխավորված մատակարարի) հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը, եթե Սպառողը այդ գումարի վերադարձի պահանջ չի ներկայացրել:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

11. Պայմանագիրն ուժի մեջ է՝ ակցեպտը Բաշխողի կողմից հաստատելու պահից:

12. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ դրանում փոփոխություններ, լրացումներ կատարվելու դեպքում կնքված պայմանագրերը Հանձնաժողովի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից համարվում են նոր կամ փոփոխված ձևին համապատասխան կնքված կամ փոփոխված:

13. Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, բացառությամբ՝ ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերի: Եթե ԷՄԱ կանոններով տվյալ դեպքի համար նախատեսված է ժամանակավոր պայմանագրի կնքում, ապա դրա գործողության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության

դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Բաշխողի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, ապա Պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով, բացառությամբ ԷՄԱ կանոններով նախատեսված դեպքերի:

14. էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարումը կարող է դադարել Սպառողի դիմումի համաձայն՝ ԷՄԱ կանոններով սահմանված կարգով:

15. Պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Բաշխողին տեղեկացնելու, ինչպես նաև մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով, իսկ Մատակարարի սպառողի դեպքում՝ մատուցված բաշխման ծառայության դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով,

3) Բաշխողի կողմից միակողմանի՝

ա. ԷՄԱ կանոնների համաձայն որոշակի ժամկետով կնքված պայմանագրի գործողության ժամկետի ավարտվելու դեպքում՝ այդ մասին ժամկետը ավարտվելուց մեկ ամիս առաջ Սպառողին ծանուցելու պայմանով,

բ. սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի դեպքում, եթե Սպառողը չունի ԷՄԱ կանոններով պահանջվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով, բացառությամբ ԷՄԱ կանոնների նախատեսված դեպքերի,

գ. բնակիչ Սպառողի մահվան, իրավաբանական անձ Սպառողի լուծարման դեպքում,

դ. ԷՄՇ կանոնների համաձայն որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու դեպքում,

ե. օրենքով, ԷՄԱ կանոններով, Պայմանագրով և Հանձնաժողովի այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

16. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել գրավոր՝ պայմանով, որ չեն հակասի Հանձնաժողովի կողմից հաստատված և գործող օրինակելի ձևին և Հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

17. Պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

18. Կողմերը պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում օրենքով, ԷՄԱ կանոններով, ԷԲՑ կանոններով, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կարգով և դեպքերում:

19. Բաշխողը սպասարկման որակի պահանջների խախտման դեպքում պարտավոր է ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

20. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրական էներգիա բաշխելու համար Բաշխողը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը օրենքով սահմանված կարգով:

21. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից Պայմանագրի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Բաշխողն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը: Տույժը կարող է հաշվարկվել Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 20-ից, եթե դրանից առնվազն 7 օր առաջ ԷՄԱ կանոններով սահմանված կարգով տեղեկացրել է Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ մատուցված բաշխման ծառայության քանակի և արժեքի մասին: Հակառակ դեպքում տույժը հաշվարկվում է ԷՄԱ կանոններով սահմանված կարգով տեղեկացնելուց ոչ շուտ, քան 7 օր հետո:

22. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրաէներգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

23. Կողմը պայմանագրային պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չի կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Ֆորս մաժոր համարվող դեպքերը, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանվում է ԷՄԱ կանոններով:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24. Պայմանագրում հասկացություններն ունեն «Էներգետիկայի մասին» օրենքով, ԷՄԱ և ԷԲՑ կանոններով սահմանված նշանակությունը, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ Պայմանագրով:

25. Պայմանագրով Սպառողը համաձայնություն է տալիս ԷՄԱ և ԷԲՑ կանոնների համաձայն իր կողմից ներկայացված անձնական տվյալները հասանելի դարձնել այլ անձանց (այդ թվում՝ բանկերին, վճարահաշվարկային կազմակերպություններին՝ ԷՄԱ կանոնների համաձայն մատակարարված (բաշխված) էլեկտրական էներգիայի դիմաց տեղեկությունը հասանելի դարձնելու, ինչպես նաև օրենքով և սույն պայմանագրի շրջանակում Բաշխողի կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

26. Կողմերի միջև առաջացող բոլոր վեճերը (տարաձայնությունները) կարգավորվում են բանակցությունների միջոցով:

27. Վեճը (տարաձայնությունը) կողմերի համաձայնությամբ չկարգավորվելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Հանձնաժողով՝ վերջինիս իրավասությունների շրջանակում վիճարկվող հարցերը լուծելու խնդրանքով կամ վեճի լուծումը հանձնել իրավասու դատարան, եթե կողմերի համաձայնությամբ չի որոշվել գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

ԲԱՇԽՈՂԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՆՎԱՆՈՒՄ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ՝ ք. Երևան Արմենակյան 127

ՀԵՌԱԽՈՍ՝ +374 10 65 00 86

ԷԼ. ՓՈՍՏ՝ office@ena.am

ՀՎՀՀ՝ 01520882

Հ/հ՝ 2474663150140670

Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ՝ N0092

Լիազորված անձ՝

Դ. Ղազինյան

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

Հավելված N 1
Էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության
մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված
մատակարարման պայմանագրի (հրապարակային օֆերտա)

ԱԿՑԵՊՏ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ)

1. Սույն ակցեպտով Դատական դեպարտամենտ
(Սպառողի անունը (անվանումը))

լրիվ և անվերապահորեն ընդունում է Հանձնաժողովի հաստատած Էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման մասին հրապարակային պայմանագրի օրինակելի ձևով սահմանված բոլոր պայմանները՝ հայտնելով իր համաձայնությունը՝ սպառման համակարգի տեղակայման տարածքում

_____
(սպառման համակարգի հասցե)

☐ կենցաղային

☒ ոչ կենցաղային

նշանակությամբ էլեկտրական էներգիա սպառելու նպատակով՝ Բաշխողի հետ վերը նշված պայմանագրի կնքմանը.

2. Սպառողի այլ տվյալները.

ՍՊԱՌՈՂ՝

անձը հաստատող փաստաթղթի տվյալներն ու օրինակը (պետական գրանցման վկայականի համար)՝ 286.184.1121345

ՀԾՀ

(ՀՎՀՀ) 02583241

բնակության (գտնվելու) վայրի

հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Ծանուցման տվյալներ.

փոստային հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

էլեկտրոնային փոստի հասցե՝ info@court.am

հեռախոսահամար՝ 010 511 771, 010 511 777, 010 511 788

Հավելված N 1
Էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության
մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված
մատակարարման պայմանագրի (հրապարակային օֆերտա)

ԱԿՑԵՊՏ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ)

1. Սույն ակցեպտով Դատական դեպարտամենտ
(Սպառողի անունը (անվանումը))

լրիվ և անվերապահորեն ընդունում է Հանձնաժողովի հաստատած Էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման մասին հրապարակային պայմանագրի օրինակելի ձևով սահմանված բոլոր պայմանները՝ հայտնելով իր համաձայնությունը՝ սպառման համակարգի տեղակայման տարածքում

(սպառման համակարգի հասցե)

☐ կենցաղային

☒ ոչ կենցաղային

նշանակությամբ էլեկտրական էներգիա սպառելու նպատակով՝ Բաշխողի հետ վերը նշված պայմանագրի կնքմանը.

2. Սպառողի այլ տվյալները.

ՍՊԱՌՈՂ՝

անձը հաստատող փաստաթղթի տվյալներն ու օրինակը (պետական գրանցման վկայականի համար)՝ 286.184.1121345

ՀԾՀ

(ՀՎՀՀ) 02583241

բնակության (գտնվելու) վայրի

հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Ծանուցման տվյալներ.

փոստային հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

էլեկտրոնային փոստի հասցե՝ info@court.am

հեռախոսահամար՝ 010 511 771, 010 511 777, 010 511 788

Բանկային տվյալներ.

բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

հաշվեհամար՝ 900011192151

Օգտագործվող հզորությունը՝

ԿՎՏ/ԿՎԱ/

Սնող ցանցի լարումը՝ Ֆազ Վոլտ

3. Սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ (իրավաբանական անձի դեպքում՝ Սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները հավաստող (հաստատող) փաստաթուղթ)՝

4. Այլ տվյալներ

1. Սպառողի ստորաբաժանումների անվանումը, քարտերի համարները և նրանց համապատասխան սպասարկող Բաշխողի տնօրինությունների, մասնաճյուղերի էլեկտրացանցերի, անվանումները (այսուհետ Կառուցվածքային ստորաբաժանումների) նշված են սույն պայմանագրի Հավելված N3-ի ցանկում:
2. Սույն պայմանագրով Բաշխողը պարտավորվում է էլեկտրաէներգիա մատակարարել Սպառողին սույն պայմանագրի Հավելված N3-ի ցանկում ընդգրկված նրա ստորաբաժանումներին:
3. Հավելված N3-ի ցուցակում նշված Սպառողի ստորաբաժանումների ցանկը կարող է փոփոխվել Սպառողի գրությունների հիման վրա:
4. Բաշխողը սույն պայմանագրից բխող իր պարտականությունները իրականացնում է իր Կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:
5. Մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 12-ը Բաշխողը սույն պայմանագրում նշված Սպառողի էլեկտրոնային փոստին ուղարկում է Հավելված N3-ի ցանկում նշված բոլոր ստորաբաժանումների հաշվետու ամսվա էլեկտրաէներգիայի ծախսերի, վճարումների և մնացորդների վերաբերյալ ամփոփ ակտը և էլեկտրոնային հարկային հաշիվը (ամփոփ), որը հիմք է հանդիսանում Սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում կատարելու համար:
6. Սպառողը մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց պարտավորվում է Բաշխողին կենտրոնացված կարգով վճարել էլեկտրոնային ամփոփ հաշիվը ստանալուց 7 օրվա ընթացքում՝ տալով համապատասխան բաշխում ըստ իր ստորաբաժանումների:
7. Պայմանագրի հավելված 3-ին կից ցանկում ընդգրկված ստորաբաժանումներից, եթե որևէ սպառիչի առևտրային հաշվիչը տեղադրված է սահմանազատման կետից դուրս, ապա ԷՄԱ կանոնների 73 կետի համաձայն այդ ստորաբաժանման բաժանորդական քարտում հաշվարկվում է տեխնոլոգիական կորուստ համաձայն համապատասխան արտոնագիր

ունեցող կազմակերպության («Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ) կողմից հաստատված կորուստների չափերի (աղյուսակը կցվում է առդիր 1 էջ):

8. Եթե կողմերից մեկը հայտնում է ցանկություն փոփոխություններ մտցնել սույն պայմանագրի հավելված N3-ում, ապա այդ մասին գրավոր տեղեկացնում է մյուս կողմին: Փոփոխությունները ներառվում են պայմանագրում լրացուցիչ համաձայնագրով:
9. Սույն պայմանագրի պայմանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխան կիրառվում են 2024թ. ___փետրվարի___1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

Սպառող՝

Ղեկավարի պարտականությունները կատարող՝

_____ Ն. Գալստյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N3

«_____»_____ 2024թ.
կնքված N ԿՊ 0139 էլեկտրական էներգիայի բաշխման
ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի
երաշխավորված մատակարարման պայմանագրի

ՑԱՆԿ
«ՀԷՑ» ՓԲԸ ՍՊԱՌՈՂՆԵՐ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

հ/հ	ID	Քարտի համարը	Սպառողի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
1	87662005	0964097	ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ	Երևանի ԷՍԴ «Կենտրոն» տարածք
2	73474004	7111412	ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ	Երևանի ԷՍԴ «Արաբկիր» տարածք
3	75275004	7009400	ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ	Երևանի ԷՍԴ «Արաբկիր» տարածք
4	81239005	4264085	ԱՋԱՓՆՅԱԿ 1 ՆՍՏԱՎԱՅՐ	Երևանի ԷՍԴ «Մաշտոց» տարածք
5	82131005	9111709	ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	Երևանի ԷՍԴ «Մաշտոց» տարածք
6	82456005	3400174	ՀՀ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ	Երևանի ԷՍԴ «Շենգավիթ» տարածք
7	130554005	0533900	ԱՋԱՓՆՅԱԿ 2 ՆՍՏԱՎԱՅՐ	Երևանի ԷՍԴ «Մաշտոց» տարածք
8	133251005	0543285	ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ	Երևանի ԷՍԴ «Շենգավիթ» տարածք
9	133259005	0543287	ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ	Երևանի ԷՍԴ «Շենգավիթ» տարածք
10	133260005	0543286	ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ	Երևանի ԷՍԴ «Շենգավիթ» տարածք
11	1437009	9005236	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
12	1991009	1333141	ԱՎԱՆ ՆՍՏԱՎԱՅՐ	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
13	3087009	3002143	ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
14	3586009	6882535	ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
15	3588009	6882537	ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
16	3932009	4882816	ՇԵՆԳԱՎԻԹ ՆՍՏԱՎԱՅՐ	ԽՍՍՏ «Գործարանային» տարածք
17	3937112	3004268	ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	ԽՍՍՏ «Գործարանային մարզային» տարածք
18	9658018	0286897	ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Աղստև» մ/ճ «Բերդ» էլ.ցանց
19	8753022	0294405	ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Աղստև» մ/ճ «Դիլիջան» էլ.ցանց
20	13521024	5013855	ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Աղստև» մ/ճ «Իջևան» էլ.ցանց
21	9486020	0285147	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Աղստև» մ/ճ «Նոյեմբերյան» էլ.ցանց
22	25877055	0279482	ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Արաքս» մ/ճ «Արտաշատ» էլ.ցանց
23	25349052	0326777	ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Արաքս» մ/ճ «Մասիս» էլ.ցանց
24	7317063	8002498	ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Արաքս» մ/ճ «Վայք» էլ.ցանց
25	37693059	4206009	ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Գեղամա» մ/ճ «Աբովյան» էլ.ցանց
26	15239044	0293256	ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Գեղամա» մ/ճ «Գավառ» էլ.ցանց
27	19247050	4101196	ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Գեղամա» մ/ճ «Հրազդան» էլ.ցանց

հ/հ	ID	Քարտի համարը	Սպառողի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
28	4996035	7005066	ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Գեղամա» մ/ճ «Ճամբարակ» էլ.ցանց
29	11453041	0283770	ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Գեղամա» մ/ճ «Սևան» էլ.ցանց
30	10274047	2006091	ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց
31	16153033	0285550	ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Դեբեդ» մ/ճ «Թումանյան» էլ.ցանց
32	12062011	0287507	ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Դեբեդ» մ/ճ «Սպիտակ» էլ.ցանց
33	10148012	6000729	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Դեբեդ» մ/ճ «Ստեփանավան» էլ.ցանց
34	36422039	5004268	ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Դեբեդ» մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
35	6236051	8210157	ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Ղարս» մ/ճ «Անի» էլ.ցանց
36	8402017	0337136	ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Մուսալեռ» մ/ճ «Աշտարակ» էլ.ցանց
37	6679021	0286292	ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Մուսալեռ» մ/ճ «Ապարան» էլ.ցանց
38	25138032	0276279	ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Մուսալեռ» մ/ճ «Արմավիր» էլ.ցանց
39	36720025	0288646	ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» էլ.ցանց
40	10765049	0288332	ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Տաթև» մ/ճ «Գորիս» էլ.ցանց
41	16347043	0287962	ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Տաթև» մ/ճ «Կապան» էլ.ցանց
42	11680053	0327279	ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	Գեղամա մ/ճ «Չարենցավան» էլ.ցանց
43	38714002	2265078	ԵՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ	Երևանի ԷՍԴ «Էրեբունի» տարածք
44	32955001	6230273	ԿԵՆՏՐՈՆ ՆՍՏԱՎԱՅՐ	Երևանի ԷՍԴ «Կենտրոն» տարածք
45	10890023	0279284	ԵՂՎԱՐԴ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	ԽՍՍՏ «Նաիրի» էլ.ցանց
46	46669042	3111679	ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐ	«Ղարս» մ/ճ «Գյումրի» էլ.ցանց

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Լիազորված անձ՝

Դ. Ղազինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

Դատական դեպարտամենտ

Տնօրենի պաշտոնակատար՝

Ն. Գալստյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.